Հանրապետական

մանկավարժահոգեբանական կենտրոն

<<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴՊՐՈՑ՝ **<<ԾԱՂԿՈՒՆՔ ԲԱՑ ԴՊՐՈՑ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ԹԵՄԱ՝ **ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ Ա.ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ, ՄԵՆԹՈՐ՝ **ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

ՈՒՍՈՒՑԻՉ՝ **ՌԱՅԱ ՍՈՒՐԻԿԻ ԴԱՎԹՅԱՆ**

2023

Բովանդակություն

1. Ներածություն

2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Ա.Բակունցի ստեղծագործություններում

3. Եզրակացություն

4. Օգտագործված գրականություն և հղումներ

Ներածություն

Հիմնահարցի արդիականությունը՝

Բակունցը գրականություն բերեց հայրենաբաղձություն և համարձակորեն փորձեց ներկայացնել այն: Բակունցը դարձավ հայրենիքի տանջալից կարոտի մեծ երգիչը: Պատմվածքում իշխողը հայրենիքի կորստյան գաղափարն է և վերադարձի բաղձանքը,որն այսօր էլ արդիական է և վրդովմունք է հարուցում թե՛ հայրենիքում,թե՛ արտերկրում:

Յուրաքանչյուր ուսուցիչ աշխատում է խթանել, զարգացնել, խրախուսել իր աշակերտների ինքնուրույն և քննադատական մտածողությունը, ձևավորել արժեքային համակարգ: Արժեքային համակարգ ձևավորելու գործում գրականության դերն անփոխարինելի է: Հայ գրականությունը մեր ազգի՝ դարերի տքնությամբ ստեղծված հոգևոր զորությունն է, մեր անկախ պետականության և ազգային միասնականության գաղափարական հենարանը, մեր ժողովրդի մեջ ազգային բնավորություն, հոգեբանություն ու մտածողություն ձևավորողը, մեր ինքնությունը, դիմագիծն ու նկարագիրը պահողը: Այդ իսկ պատճառով մեր կրթական համակարգի ամուր և արդյունավետ գործունեության համար, որպես գաղափարական պայքարի կարևոր զենք, պետք է ծառայի հայ գրականությունը:

Հետազոտության նպատակները՝

- Խթանել, զարգացնել, խրախուսել իր աշակերտների ինքնուրույն և քննադատական մտածողությունը, ձևավորել արժեքային համակարգ:
- Սեփական ժողովրդի նկատմամբ գիտակցված, ազգային արժանապատվությամբ զուգորդված վերաբերմունքի, հայրենասիրությամբ և ազգի հարատևության գաղափարի ընկալումը, ազգային արժեքների և խորհրդանիշների հանդեպ հպարտության և հիացումի սերմանումը:

Հետազոտության խնդիրները՝

- Ազգային արժեքների ու մշակույթի գնահատում:
- Գրողի մարդկային նկարագրի բացահայտումը
- Բակունցի ստեղծագործությունների ուսումնասիրում

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Ա.Բակունցի ստեղծագործություններում

Հայի վրա արևը երբեք մայր չի մտնում.նա ցրված է աշխարհի բոլոր կողմերում: Երբ մի տեղ մայրամուտ է, մյուս տեղում արդեն արևածագ է, -ես վերարտադրեցի Գ.Նժդեհի մտքերից մեկը: Սփռված աշխարհով մեկ, իրարից հեռու, նաև անծանոթ ու հաճախ՝անհաղորդ իրար կյանքի,բայց իրար բերող ու միավորող ընդհանուր մի բան կա բոլորի մեջ՝ հայրենիքի կարոտը, որը երբեք չի քնում: Անգամ հայրենիքում հայն էլի կարոտում է: Մեր գրականության մեջ խոր ակոս է ձգել հայրենաբաղձությունը, վերածվել ցավի ու կարոտի:

Չարենցն իր Կարսին ձոնեց «Երկիր Նաիրին»,Ակսել Բակունցը Գորիսին՝ «Կյորեսը»: Հանդես եկան Գ.Մահարին, Վ.Թոթովենցը և ուրիշներ:

Հայրենի հողի օրհներգուները դարձան նրանք, և կորցնելու ցավը տակնուվրա արեց բոլորին՝ հայրենապաշտ ու հայաշատ մտածողներին:

Բակունցին որքան հարազատ է Կյորես-Գորիսը, նույնքան Երկիրը, որ դատարկվել, դարձել էր անհայ մի աշխարհ,և ցնցող ողբերգությունը ժայթքեց իբրև պատմվածք՝ <<Ծիրանի փող>>, ու ողբերգություն դարձավ հենց իր համար: Բայց այն պիտի գրվեր, մեծ հումանիստի խորքում պարփակված ցավը պիտի ճեղքեր հոգու պատյանն ու դուրս հորդեր:Դիպուկ ու տեղին է հնչում Դ.Գասպարյանի բնութագիրը. <<Սխրանք էր այդ սերնդի կյանքն ու գործը,գրական ֆիդայություն՝ կոչված պահել-պահպանելու հայրենիքն ու ժողովուրդը, հետնորդներին ժառանգելու պատմության հիշողությունը>>:

Տագնապած էր մեծերի սիրտը, Չարենցն ասես որձաքարի վրա դրվագում էր. <<Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է>>: Բակունցը <<Ծիրանի փողով>> հնչեցնում էր նույն հավաքական միասնության գաղափարը՝ կորսված դրախտը վերգտնելու հույսով:

Պատմողը նման է բանասացի, որ ոգում է իր ասքը Սասնա դյուցազունների մասին: Բանասացը անտարբեր չէ,նա հուզված ձայնով ներկայացնում է այդ հերոսական մարդկանց ողբերգությունը, արցունքոտ աչքերով թերթում է նրանց ճագատագրի տխուր էջերը:

...Մի բուռ սասունցիներ, որ մազապուրծ են եղել,որ անվերջ ու անընդմեջ իրենց հիշողությունների, իրենց սրտի երգի ու մորմոքի հետ են:Նրանք կան ու չկան: Կարծես ապրում են անցյալ կյանքով. իրենց դուրս չեն պատկերացնում երեկվա իրենց ապրածից: Փախել են Երկրից, բայց հող հայրենին նրանց սրտում է, ամեն պահ լցված են նրա ներկայությամբ:

Հայ ժողովրդին բնորոշ հավատն առկա է յուրաքանչյուր լեռնցու հոգում,և նրանք շարունակում են փայփայել տուն վերադառնալու հնարավորությունը, ապրում են ողբերգական երազներով:

Եվ պայքարում են այդ երազի համար ու երազի ... դեմ, որ հայրենիքը երազի չվերածվի: Բոլորի հոգիներում պայծառ լուսաստղի պես միշտ կենդանի է տունդարձի տենչը:

Այս հոգեվիճակով նվագում է Հազրոն ծիրանի փողը, որ միշտ արթուն պահի տան կանչը, Երկրի կանչը: Նվագն ասես հարցնում էր. «Ո տայր ինձ ծուխն ծխանի»: Առասպելական երկրի առասպելական զավակն էր Հազրոն, հիմա էլ կռվում էր երգով:

Ուժով ու հոգեկան գեղեցկություններով նա ու յուրայինները հիշեցնում էին Սասնա դյուցազուններին: Օժտված բարձր դիմադրողականությամբ՝ նրանք կենդանի էին պահում սրտի հիշողությունը՝ իրենց անլուր նայվածքով, ժայռեղեն ու ամրապինդ խոսվածքով, խոլական նվագով ու պարով. «Հսկաների հին պարը... Հետզհետե, ինչպես լուսաբացը

լեռներում, զարթնեց «Յար խուշտան»։ Նա սկսեց դանդաղ և մեղմ, հետո ձայները զորացան, արագացավ չափը։ Հետո վայրենի կանչերով վեր թռավ ջրբաժանը, կանգնեց կտուրի մեջտեղ, նրան հետևեց երկրորդը, երրորդը, և շուտով նրանց երկու շարքը, ինչպես երկու վիթխարի ապառաժ, զարնվեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով և կրծքով։ Նվագն ավելի թնդեց. դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրա արշավում էին բանակներ, նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից»։ Ամեն ինչ դրել էին մոլեգին պարի մեջ, և նրանց ապրումներն արտակարգ ուժով է ներկայացնում հոգեբանական այս հատվածը։ Այնպես էին պարում ասես աճում էին հայրենի հողի ընդերքից։ Ինքնարտահայտման հնարավորություն էր տալիս պարը, իսկ Հազրոն,ասես ժողովրդական էպոսից դուրս թռած հսկա, հնչեցնում էր ժողովրդական երգը, սրտերի կարոտը, և բոլորը երախտապարտ էին, երբ Հազրոյի փողն էր խոսում, բոլորը լռում էին, քանի որ բոլորն էին խոսում։ Այդ պահին նրանց մեջ փոխըմբռնման համերաշխություն էր տիրում։ Ծիրանի փողից հառնում էր ժողովրդի կարոտն ու երազը։ «Հաղ մը երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բարձր սարին։ Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու... Երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր...»։

Միջանկյալ զուգադրենք Շիրազի տողերը. «Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա, Ու մամռած նայե իմ Արարատին»։

Քանի որ գրողի ստեղծագործությունների հիմքը նրա ապրած կյանքն է,ուստի առաջին ժամին աշակերտների մասնակցությամբ կենսագրական որոշ տեղեկություններ եմ հաղորդում՝ նյութը զուգորդելով հետաքրքիր դեպքերով, իրադարձություններով, հուշերով, գրողի մասին ասույթներով, որոնցով կենդանի ու լիարյուն է դառնում Բակունցի մարդկային նկարագիրը։

<<Ծիրանի փողը>> պատմվածքն ընթերցելուց հետո՝ կարդում ենք նաև <<Լառ-Մարգարը>> և սկսում հարցերով ամփոփում՝ համադրելով կերպարները։ Ինչ ընդհանուր բան կա այս երկու պատմվածքների միջև։ Աշակերտները հեշտությամբ պատասխանում են, որ եղեռնից փրկված փախստականներն են նրանց հերոսները, չմոռանալով նշել, որ

պատանի Բակունցը տեսել էր արդեն ջարդից մազապուրծ գաղթականներին։ Ինչպես են սկսվում պատմվածքները։ Թերևս նախապես ուշադրություն դարձրած չլինեն, և աշակերտներից մեկը կարդում է <<Ծիրանի փողի>> առաջին պարբերությունը,իսկ մեկ ուրիշը՝ <<Լառ-Մարգարի>>, և անմիջապես պատասխանում են, որ <<Ծիրանի փողը>> գրված է առաջին դեմքով՝ հեղինակը անմիջական մասնակիցն է և պատմում է վերհուշի ձևով։ Մինչ պատմվածքի սյուժեն զարգացնելը՝ նախաբան կա, որը ենթադրում է հետագա գործողությունները։ Իսկ Լառ-Մարգարը սկսվում է միանգամից, առանց նախաբանի, այնպես, կարծես ծանոթ ենք հերոսին։ <<Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր>>։

Ովքե՞ր են հերոսները հարցին աշակերտները պատասխանում են՝ գաղթականներ, որոնք հարկադրաբար թողնելով տուն ու տեղ, եկել, հիմնավորվել են իրենց համար անծանոթ այդ գյուղում։

-Ինչո՞վ էին զբաղվում Հազրոն ու Լառ-Մարգարը։ Դաժանություն, մահ, ավեր տեսած այդ մարդիկ չէին կորցրել իրենց ազնվությունն ու արդարամտությունը։ Տեղացիները հատկապես նրանց են դարձրել ջրբաշխ, քանի որ նրանցից յուրաքանչյուրը «ղարիբ մարդ է, ազգ ու բարեկամ չունի, ջուրը արդար բաժին կանի»։

Այնուհետև հանձնարարում եմ գտնել և կարդալ նրանց արտաքինը նկարագրող տողերը՝ «Ինչքան մոտենում է ջրվորը, այնքան բարձրահասակ է երևում։ Ես նայում եմ նրա բաց կրծքին. թվում է թե նրա ձայնը պիտի խրոխտ թնդա։ Ամենևին էլ խրոխտ չի նրա ձայնը, այլ՝ բարակ ու քաղցր»։

Լառ-Մարգարի արտաքինի նկարագրությունը ցրված է պատմվածքի մեջ և ամբողջանում է համեմատությունների գեղեցիկ խմբով՝ «Արևից խանձված դեմքի վրա սրածայր քիթը երկար կտուցի էր համեմատ, եթե սպիտակ բեղերը չլինեին»,«Լառ-Մարգարի ջրակալած աչքերում փայլատակում էր մի մեծ հրճվանք…», -պապակ հողին ջուր հասցրած, դրացիներին օգտակար եղած մարդու հրճվանք էր։

«Ծիրանի փող»-ում ամբողջությամբ է նկարագրվում գաղթական Հազրոյի անցած ուղին, իսկ Լառ-Մարգարի ապրած կյանքին տեղեկանում ենք հիշողությունների ձևով, հատվածաբար։ Այստեղ արդեն այն հարցին, թե ինչու են որոշ պարբերություններ սկսվում բազմակետով, աշակերտները հեշտությամբ պատասխանում են։

Այնուհետև փորձում եմ հարցերի միջոցով ձևավորել արժեքային համակարգ։ Հարցին, թե ով էր Լառ-Մարգարը, նրանք կպատասխանեն, որ Լառ-Մարգարը տեղացի չէ։ Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես շատ ափերի է զարկվել, վերջը ալիքը լափու է տվել և նրան իր թոռան հետ գցել այդ գյուղը։

Ինչպիսի՞ մարդ էր Լառ-Մարգարը, հոգեկան ի՞նչ առաքինություններով էր օժտված

Աշակերտները թվում են Լառ-Մարգարի առաքինությունները՝ աշխատասիրություն, ազնվություն, հոգու վեհություն, արդարամտություն։ Մարգարը պատմվածքում վերածվում է կերպար-խորհրդանիշի։ Նա հայ ժողովրդի տոկունության, անընկճելիության մարմնավորումն է, ստեղծագործ ու աշխատասեր հայ ժողովրդի ուժի արտահայտությունը։ Նա օժտված է հայ ժողովրդին բնորոշ պարզությամբ ու անկեղծությամբ։

Արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ունի նաև ազգային խորհրդանիշների ըմբռնումը և դրանց նկատմամբ սիրո ու երկյուղածության դրսևորումը։ Աշակերտները պիտի կողմնորոշվեն, թե հային բնորոշ ինչ խորհրդանիշներ, ազգային հատկանիշներ ու սովորություններ կան պատմվածքներում։ Ուշագրավ է «ծիրան» բառի խորհուրդը։ Ծիրանը՝ որպես բնիկ հայկական միրգ. եթե Լառ-Մարգարը Արևելյան Հայաստան գաղթեր, այլ արտասահման, դարձյալ ծիրան պիտի աճեցներ՝ աշխարհին հիշեցնելով Հայաստան երկիրը։ Դասին կարելի է ընթերցել հետևյալ պատմությունը. «Հայկական լեռնաշխարհը բազում մեծ ու փոքր երկրաշարժեր է տեսել։ Դրանցից մեկը Մասիսի կատարամերձ Ակոռի գյուղի երկրաշարժն է (1840, հուլիս 20), երբ հենց

առաջին հարվածից երկրի երեսից անհետացել են Ակոռի գյուղն ու նրա կողքի Սուրբ Հակոբ եկեղեցին՝ իրենց հետ տանելով ողջ բնակիչներին՝ մոտ 2000 մարդ»։

Գերմանացի ճանապարհորդ ու բնագետ Մորից Վագները այդ երկրաշարժից երեք տարի անց 1843-ին, Աբովյանի հետ բարձրանում է Ակոռի։ Երկրաշարժն Ակոռիից ոչ մի հետք չէր թողել, բայց ահա գյուղի հոչակավոր այգին կանգուն էր մնացել…13 ծիրանենի։ «Այսպիսի հրաշք կարող էր միայն հայոց աշխարհում լինել, - զարմացած բացականչել է Վագները, ամեն ինչ կործանվել է, համարյա բան չի մնացել, բայց ամենակարող երկրաշարժը չի կարողացել տապալել ծիրանենիները։Չէ, Խաչատուր, սա մեծ խորհուրդ ունի։ Ծիրանը հայկական երկրի խորհրդանիշն է։ Այս կանգուն ծիրանենիները կարծես թե ուզում են ասել, որ ինչ արհավիրք էլ լինի՝ Հայաստանը հուր-հավիտյան կանգուն կմնա։ Խորհուրդ ունի նաև 13 թիվը, որ հաավաստում է, թե ոչ մի պատահականություն չի կարող աշխարհի երեսից վերացնել հայ ժողովրդին։ Այստեղ խորհրդանիշներ են նաև քարերը և քարոտ Սասունը, Սասնա դյուցազներգությունն ու Մարութա սարը, Արարատը,

Հայկական պարն ու <<Յար խուշտա>> պարը, որ իրենց հետ բերել են ավանդապահ ու նախանձախնդիր սասունցիները. <<Եվ հետզհետե, ինչպես լուսաբացը լեռներում, զարթնեց <<Յար խուշտան>>։

Աշակերտները գտնում և կարդում են պարի տեսարանը։

Նա սկսեց դանդաղ ու մեղմ, հետո վայրենի կանչով վեր թռավ ջրբաժանը, կանգնեց կտուրի մեջտեղ, նրան հետևեց երկրորդը, երրորդը և շուտով նրանց շարքը, ինչպես երկու վիթխարի ապառաժ, զարնվեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով և կրծքով։ Նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից։

Երբ մի շարքը մյուսին ետ էր մղում կարծր կրծքերի զարկով նահանջողները արշավում էին նոր թափով, որպեսզի վրեժխնդիր լինեն ամոթի և պարտության համար»։

«Յար խուշտա» պարը կորուսյալ աշխարհի մի սրտակեղեք նկարագրություն է։ Սասունցիների պարը հայ ժողովրդի անպարտելի ոգու արգասիքն է։ Հաջորդում է ասմունք Գ. Էմինի «Սասունցիների պարը» բանաստեղծությունից. «Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հիացավ, Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ, Որ պար չէ սա, այլ մի երկրի Քաջ պատմություն…»

Ինչքան կարոտ, հպարտություն, ժողովրդի ոգու անընկճելիություն, հերոսություն է ամփոփում սասունցիների պարը և Հազրոյի նվագը. կա և թախիծ այդ երգի մեջ, որ կարծես ինչ-որ մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի»։

Հազրո, իսկ ում կտաս քո ծիրանի փողը։ Ձիմ ծիրանի փող կիտամ իմ քաջարծիվ թոռնիկին»։ Այսինքն՝ ժառանգաբար պիտի ծխացնեն հայրենիքի կարոտը մինչև բացվեն հույսի դռները։

Ամփոփելով երկու պատմվածքները՝ պիտի ասել, որ Բակունցը բացեց կարսված հայրենիքի գրական ճանապարհները, որ հետագայում պիտի շարունակեին Քոչարը, Դաշտենցը, Գալշոյանը։ Հարց է առաջանում. չէ՞ որ կարոտը ապրում էր նաև սփյուռքում, բայց սփյուռքահայ գրողները կարող էին համարձակորեն խոսել այդ մասին, մինչդեռ հայրենիքում մեծ համարձակություն էր պահանջվում։ Բակունցը գնաց այդ քայլին, և դրա համար հատուցեց կյանքով։ Դժվար օրերին Չարենցը գրեց.

…Այս ամենի համար և Ծիրանի

Հազարամյա փողի համար քո այն,

Որ դարերով տենչած խաղաղության

Երգն է հնչում, և մեր ժողովուրդը քանի

Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո

Հնչելու է երգեր եղբայրական։

Այս ամենի համար, օ, խեղճ իմ բարեկամ,

Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով,

Այս ամենի համար և քո եղերական

Տառապանքի համար, որ արդ կրկին

Վեհություն է խառնում քո անաղարտ երգին

Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական։

«Իսկ դպրոցից մի քիչ հեռու՝ իրենց տան առաջ ծիրանի տունկերն են ձգվում արևի տակ», - այսպես է վերջանում «Լառ-Մարգարը» պատմվածքը։ Լավատես է նաև Հազրոն։ Բակունցի լավատեսությունը հայ ժողովրդի հոգեկերտվածքն է և նրա գլխավոր հատկանիշներից մեկը, որը աշակերտների արժեհամակարգի ձևավորման գործում նույնպես մեծ դեր ունի. «Էսօր դուման է, վաղը արև կծագի»։ «Դուման» օրերում Չարենցը, Բակունցը և շատերը պաշտպանեցին ճշմարիտ սկզբունքները, պահպանեցին իրենց մարդկային և ազգային դիմագիծը։

Եզրակացություն

Ուսուցիչը գիտելիքներից բացի սովորողներին պետք է տա այդ գիտելիքները կյանքում կիրառելու կարողություններ և հմտություններ, ուշադիր և առանց միջամտելու լսի որևէ հարցի շուրջ ծավալված քննարկումը, մտահոգվի ոչ թե նրանով, որ սովորեցնի միայն ծրագրային նյութը, այլ նրանով, որ այդ նյութի հիման վրա սովորողների մեջ ձևավորի անհրաժեշտ հատկություններ ու որակներ, օգնի սովորողին կշռադատված որոշումներ կայացնել՝ իր որոշումը պարտադրելու փոխարեն, խրախուսի հարցադրումները և ժամանակ տա մտածելու իր տված հարցերի շուրջ, նախաձեռնի սովորողներին երկխոսության մեջ մտնելու իր և միմյանց հետ, ընդունի և հանդուրժի կարծիքների բազմազանությունը, շահագրգռի և կոնկրետ նպատակներ դնի սովորողների առջև, այնպիսի հետաքրքիր ու հագեցած դասեր կազմակերպի, որ սովորողներն անհամբերությամբ սպասեն հաջորդ հանդիպմանը:

Առաջարկություն

- Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը, ազգային արժեքների ու մշակույթի վերաբերյալ գիտելիքները զարգացնել բակունցի մարդկային նկարագրի բացահայտման, ստեղծագործությունների ուսումնասիրման միջոցով:
- գիտելիքներից բացի սովորողներին պետք է տալ այդ գիտելիքները կյանքում կիրառելու կարողություններ և հմտություններ,
- ուշադիր և առանց միջամտելու լսել որևէ հարցի շուրջ ծավալված քննարկումը, մտահոգվել ոչ թե նրանով, որ սովորեցնել միայն ծրագրային նյութը, այլ նրանով, որ այդ նյութի հիման վրա սովորողների մեջ ձևավորել անհրաժեշտ հատկություններ ու որակներ,
- օգնել սովորողին կշռադատված որոշումներ կայացնել
- խրախուսել հարցադրումները

- նախաձեռնել, որ սովորողները երկխոսության մեջ մտնեն ուսուցչի և միմյանց հետ,
- ընդունել և հանդուրժել կարծիքների բազմազանությունը,
- հետաքրքիր ու հագեցած դասեր կազմակերպել, որպեսզի սովորողներն անհամբերությամբ սպասեն հաջորդ հանդիպմանը։

Օգտագործված գրականություն և հղումներ

1.Դ.Գասպարյան ,Հայ գրականությունե

2. https://library.hayreniq.ru/armyanskie_pisateli/axel_bakunc/